ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

« 9 » մարտի 2017թ. N 6-Լ(4)

Հ. ՎԱՐԴԱՆՅԱՆԻ ՆՇԱՆԱԿՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Քաղաքացիական ծառայության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով, 15-րդ հոդվածի 3-րդ մասի գ) կետով և 4-րդ մասով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2002 թվականի հունիսի 13-ի «Քաղաքացիական ծառայության թափուր պաշտոն զբաղեցնելու համար մրցույթ անցկացնելու կարգը սահմանելու մասին» N 17-Ն որոշմամբ սահմանված հավելվածի 75-րդ և 76-րդ կետերով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության անասնաբուծության և տոհմային գործի բաժնի պետի (ծածկագիր՝ 30-2.2-123) թափուր պաշտոնը զբաղեցնելու համար մրցույթ անցկացնող մրցութային հանձնաժողովի 2017 թվականի մարտի 7-ի եզրակացությունը և Հ. Վարդանյանի դիմումը.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հարություն Ռոբերտի Վարդանյանին 2017 թվականի մարտի 9-ից՝ երեք ամիս փորձաշրջանով, նշանակել Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության աշխատակազմի անասնաբուծության և անասնաբուժության վարչության անասնաբուծության և տոհմային գործի բաժնի պետի (ծածկագիր՝ 30-2.2-123) պաշտոնում:

2. Աշխատավարձը՝ համաձայն հաստիքային ցուցակի:

Ա. ԿԻՐԱԿՈՍՅԱՆ